



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 08 » *փետրվարի* 2022թ. *14-ը*

ք. Երևան

Ի ՓՈՓՈԽՈՒՄՆ N 09-Ն ԱՌ 09.02.2021Թ. ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ «ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ և ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՍՏՈՒԳԱԶԱՓՄԱՆ ԵՎ ԱՅԼ ՉԱՓԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՄԱՆԻ

Հիմք ընդունելով «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության կողմից մատուցված ծառայությունների կանոնակարգման անհրաժեշտությունը, Իոնիզացիոն չափումների լաբորատորիայի վարիչի N 120 առ 04.02.2021թ ներկայացված զեկուցագիրը և ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենի 88-րդ հոդվածով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Վերոհիշյալ հրամանով հաստատված Հավելված 4-ում՝ Իոնիզացիոն չափումների լաբորատորիայում չափման միջոցների (ՉՄ) պայմանագրային հիմունքներով ստուգաչափման (չափումների) աշխատանքների գների ցանկում, կատարել հետևյալ լրացումը՝
 - Շենք շինություններում դոզիմետրիկ և ռադիոմետրիկ չափումների իրականացում – 20 000 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ):
2. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՏՆՕՐԵՆ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ԱԼԲԵՐՏ ԲԱԲԱՅԱՆ